



Համարը N 895-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2005.07.20/46(418)
Հոդ. 889

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 21.07.2005

Ընդունման ամսաթիվը 16.06.2005
Ստորագրման ամսաթիվը 02.07.2005
Վավերացման ամսաթիվը 09.07.2005
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԵ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԵՎ ԳՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
9 հուլիսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիսի 2005 թվականի N 895-Ն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԵ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԵՎ ԳՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «գ» և «ե» կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության և պետական չափագիտական վերահսկողության իրականացման նպատակով փորձանմուշների գնման և զնված ապրանքների տնօրինման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2005 թ. հունիսի 2
Երևան

Հավելված

**ՀՀ կառավարության 2005 թվականի
հունիսի 16-ի N 895-Ն որոշման**

Կ Ա Ր Գ

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՍԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՏՎՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ԶԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՏՎՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԵՎ ԳՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափազիտական կանոնների ու նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության նպատակով փորձանմուշների գնման ֆինանսական աղբյուրները և գնված ապրանքների տնօրինման գործընթացը:
(1-ին կետը փոփ. 30.11.17 N 1513-Ն)

II. ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

2. Փորձանմուշների կանխիկ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցներից:
3. Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա ստուգման իրականացման ընթացքում ստուգաթերթի համապատասխան հարցը պարզաբանելու նպատակով գնման ենթակա փորձանմուշների քանակի ու պահանջվող գումարի հաշվարկը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ղեկավարին՝ փորձանմուշների գնման համար անհրաժեշտ դրամական միջոցների տրամադրումն ապահովելու նպատակով:

(3-րդ կետը խմբ. 30.11.17 N 1513-Ն)

3.1. Տեսչական մարմնի վերահսկողության որևէ կոնկրետ ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունների իրականացման նպատակով առանց տնտեսավարող սուբյեկտի համար որևէ ուղղակի հետևանքի հնարավորության, տեսչական մարմնի կողմից տեղեկություններ հավաքելու տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հրամանի հիման վրա գնման ենթակա փորձանմուշների քանակի ու պահանջվող գումարի հաշվարկը ներկայացվում է նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ փորձանմուշների գնման համար անհրաժեշտ դրամական միջոցների տրամադրումն ապահովելու նպատակով:

(3.1-ին կետը լրաց. 30.11.17 N 1513-Ն)

4. (կետն ուժը կորցրել է 30.11.17 N 1513-Ն)

5. Փորձանմուշների գնման համար անհրաժեշտ դրամական միջոցներ ստանալու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի կողմից նախարարության աշխատակազմի ղեկավարին են տրամադրվում հրամանի կամ հանձնարարագրի պատճենը, գնում կատարելու համար գումար ստացողի անունը, ազգանունը և պաշտոնը, գնման ենթակա ապրանքատեսակի անվանումները, քանակը և գնման համար անհրաժեշտ գումարի չափը:

(5-րդ կետը խմբ. 30.11.17 N 1513-Ն)

6. Փորձանմուշի գնման ընթացքում կազմվում է փորձանմուշի գնման մասին ակտ՝ համաձայն ձևի:

**III. ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ
ԵՎ ՀԵՏԱԳԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

7. Փորձանմուշի գնումից հետո ստուգման իրականացման ժամանակահատվածում գումար ստացող անձը գնված փորձանմուշը հանձնում է փորձարկման՝ նախարարության հետ պայմանագրի կնքած համապատասխան փորձարկման լաբորատորիա ունեցող կազմակերպությանը՝ նրա հետ կնքելով փորձանմուշի հանձնման-ընդունման մասին ակտ:

8. Գնման և փորձարկման հանձնման ենթակա փորձանմուշի քանակը որոշվում է արտադրանքի տվյալ

խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով՝ համաձայն տեխնիկական կանոնակարգերով և չափումների միասնականության ապահովման բնագավառում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների:

9. Ստուգման ավարտից հետո (նմուշառում, փորձարկում, ակտի կազմում և ստորագրում) տեսչական մարմնի ծառայողը (գնման համար գումար ստացող անձը) մեկօրյա ժամկետում նախարարության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է զեկուցագիր գնված և փորձանմուշի փորձարկման չհանձնված մասը (հսկիչ նմուշը) նախարարության պահեստի պահ հանձնելու մասին՝ կցելով նաև հաշվետվություն գնում կատարելու համար ստացված գումարների ծախսման մասին:

(9-րդ կետը փոփ. 30.11.17 N 1513-Ն)

10. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներով գնված և ի պահ հանձնված ապրանքները նախարարության հանձնաժողովի որոշումների հիման վրա հանձնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի տնօրինմանը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թոփուզյան

Ձև

ԱԿՏ

ՓՈՐՁԱՆՄՈՒՇԻ ԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

----- 200 թ.

քաղ. -----

(ակտի ձևակերպման վայրը)

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

ստուգման ղեկավար, տեսչական մարմնի ծառայող և ստուգման մասնակիցներ -----
(անունները,

ազգանունները, ստուգմանը ներգրավված անձանց անունները, ազգանունները, պաշտոնները)

կողմից -----
(տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչների անունները, ազգանունները, պաշտոնները)

ներկայությամբ -----
(տեխնիկական կանոնակարգերի նշագիրը, անվանումը)

տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի համապատասխանության ստուգման համար

(ստուգվող արտադրանքի անվանումը, փուլը)

արտադրանքից ընտրվել են փորձանմուշներ:

| | | | | | | | |
|--|--|--|--|--|--|--|--|
| | | | | | | | |
| | | | | | | | |

Ստուգման ղեկավար, տեսչական մարմնի ծառայող

Ստուգման մասնակիցներ

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչներ

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ. Տ.

(ձևը փոփ. 30.11.17 N 1513-Ն)

(կարգը փոփ., խմբ., լրաց. 30.11.17 N 1513-Ն)